

պատուարժան Վահանային՝ և մինը առ Ղլա՝՝ ուկոս Պարգազարեան խընդ-
րելով որ բարեհաճի տպարանիս նուի-
րել, վստահ ընկալի թէ իրենց բազ-
մանայր համեմատ անկորուստ կը մը-
նան : Վնայս վերջերը Քլեհալ 24 կոտր
պատկերները տնջնաւ հասաւ Սրբա-
զան Հօր, և տպարանի յաճառեցաւ :
Եթէ առիթ ունենամք մարտւոյ տը-
պագրելով յատուկ տետրակով ՚ի լոյս
կրնձայեմք : Խոսքերնիս վերջայնելէն
յառաջ սա կրտեմք, թէ չեմք կարող
մեր խորին շնորհակալութիւնը յայտնե-
լու Պատուարժան Վահանային, այլ կը
յանձնեմք զինքը փոխարէն իւր նուիրու-
ցը այն Տէրոջ՝ որ կը պարգեւէ իւր
անսպառ գանձէն անոնց, որ իւր ան-
ուանը կառուցեալ շէնքերուն պայծա-
ռութեանը անխտիր կընուիրեն իրենց
տուրքը :

ԱՐԲԵ ՅՈՒԹԻՒՆ

Մոյն ամսին քանի քանի դժբախ-
տութեանց առարկայ, որքան անվայել
գործոց զմարդը եկեմակայ ընելը ա-
մենուն յայտնի է . և ըրած զհնչեալն
մանրամասն պատմութիւնը ատուար
հատորներ կը կազմէ . մեր միայք անոր
երեսէն ծագած թշուառութեանց նը-
կարագրութիւնը ընել չէ : այլ գրծ-
բարիտ մանկայ մի պատահած ցաւալի
տրկածը . որ արբեցութեան երեսէն
կրեց : Վնայս մէջ երկու օտարագգի
ուխտաւորք գլխեւան մի մէջ Վագոսի
գաւաթները պարպելուն, կ'ըստիպ-
ուին Վագոսի օլ գինաւոր գրաւիլ, և
արգի պատերազմական զենքերու մէջ
նեալը տեղ չունենալուն . երբ ատու-
ռանակով կաշտատէին արբեցութեան
տունը փառաւորել, փոխանակ զինու-
որութիւն իրենց վրայ տեսնելու դրծ-
բախտաբար վեց տարեկան տղա մի
ազդերէն զարնուելուն ճշգր ու տղա
շակը ընցին : որով պարտաւորեցան

փախուստ տալ : Թէ և լապիկներս ու-
շտորութիւնը արգելք եղաւ իրենց
ընթացիցը, և տղան իւր ծնողայր տու-
նը տարուելով, մէկ քանի օրէն յետոյ
բժիշկները ստիպուեցան խեղճ տղուն
ոտքը կտրել ՚ի դարձանս Վագոսին և
Վագոսին :

Արբեցութիւն՝ անգութ գահիճ,
փոխանակ բեզ գգւողները բարեւելու
անմեղ տղայ մի կը կազայնեն : Եւ
ինչ առողջ հասակներ թէ բարորակեթ
և թէ նիւթապէս չէ կաղացուցած :
Արբեցող լաւ միտ գիր՝ քաւ ընկերոս
կիցներդ գիւրին կերպիւ շաղատեցան
տեսչութեան ձեռքէն, անմեղ տղեկին
ոտքին գինը, և գնացած ծախսը տու-
ծեցին ՚ի շնորհս ժամանակաւոր զուար-
ճութեան . և թէ այսպէս ըսելով՝ այս-
ինքն արբեցութիւնը զուարճանալու
համար է որ կարբենք, զուարճութիւն
բաւը նախատած չեմք ըլլար :

ՆՈՒԱՏԻՊ ՄԱՏԵԱՆԲ

Ինչպէս տարւոյս առաջին թուով
ծանուցած էինք Ղոշու աւետարանի
մամուլ յանձնուիլը, այս անգամ ա-
րախութեամբ կը ծանուցանեմք . թէ
բաւ խոտման մարտւոյ տպագրութիւն
և ընտիր թղթով ապուելով ծախսա-
հատուեցաւ ՚ի գին 11 Փռանկ և 10 սան-
թիմ . և կը գանուի միշտ Փռանկի
հաշուով ամեն գրաւմառաց քով :
Վայնպէս համառօտ պատմութիւն Վա-
տուածաշունչ հին և նոր կաակարա-
նաց, աշխատութիւն Տնտեսեան մե-
ծարու Պ . Եղիայի, և կը ծախուի ՚ի
գին 2 Փռանկ 50 սանթիմ . կը յու-
ստմք որ Վագոսին Պատուելի վարժա-
պետը կը բարեհաճին այս նոր ար-
տագրութեան ձեռնառութիւն ընել,
գարոցաց մէջ այս գրքէն գործադրելով
որով կրկին անգամ աւելի նրբութիւն
տպելու պատիւն կունենամք :